՝՝ՄԵՀՐԱԲՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՔՈԼԵՋ՝՝ ՍՊԸ ԲԺՇԿԱԿԱՆ ՔՈԼԵՋԻ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. ՝՝Մեհրաբյանի անվան բժշկական քոլեջ՝՝ ՍՊԸ բժշկական քոլեջի՝ այսուհետ /ՄՈՒՀ/ ուսանողական խորհուրդն ուսանողության ներկայացուցչական, ինքնակառավարման և նրա շահերը ներկայացնող մարմին է:

1.2.ՄՈՒՀ-ի ուսանողական խորհուրդն /այսուհետ Խորհուրդ/ արտահայտում և պաշտպանում է ուսանողության շահերը, նպաստում ուսանողների կրթական, գիտական, ստեղծագործական, ֆիզիկական, բարոյական և հոգևոր զարգացմանը:

1.3.Խորհրդի լիազորությունները և գործունեության կարգը, ՀՀ օրենսդրությանը համապատասխան, սահմանվում է սույն կանոնադրությամբ:

1.4.Խորհրդի որոշումները ներկայացվում են ՄՈՒՀ-ի տնօրենին հաստատման համար:

2. ԽՈՐՀՐԴԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

2.1.Պաշտպանել ուսանողության շահերն ու իրավունքները:

2.2.Ապահովել ՄՈՒՀ-ում ինքնակառավարման և ուսանողական ինքնավարության գործընթացների ծավալումն ու զարգացումը:

2.3.Աջակցել ՄՈՒՀ-ում սովորողների և ՄՈՒՀ-ն ավարտած շրջանավարտների իրավունքների ու շահերի պաշտպանությանը:

2.4.Ապահովել ուսանողների մասնակցությունը ՄՈՒՀ-ի կառավարմանը:

2.5.Ուսանողությանն առնչվող հարցերը՝ խմդիրները, բողոքներն ու առաջարկները ներկայացնել ՄՈՒՀ-ի ղեկավար մարմիններին:

2.6.Մասնակցել ուսանողների կրթական ու դաստիարակչական աշխատանքներին, ինչպես նաև օժանդակել նրանց հոգևոր, մշակութային ու ստեղծագործական գործունեության կազմակերպմանը:

2.7.Հետևել ՄՈՒՀ-ի ներքին կարգապահության պահպանմանը:

2.8.Քննարկվում է ընթացիկ և հեռանկարային հարցեր:

2.9. Լսվում է նախագահության հաշվետվությունը ընդհանուր ժողովների միջև ընկած ժամանակահատվածում ՈՒԽ-ի կատարած աշխատանքների մասին:

3. ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԸ

3.1.Խորհուրդն աշխատանքները կազմակերպում է՝ ելնելով իր առջև դրված խնդիրներից ու նպատակներից և մասնակցում է ՄՈՒՀ-ի կառավարմանը:

3.2.Խորհրդի պարտադիր անդամներն են բոլոր մասնագիտությունների բոլոր կուրսերի ավագները, որոնց համապատասխան մասը պարտադիր պետք է մասնակցի ՄՈՒՀ-ի մանկավարժական խորհրդի նիստերին:

3.3.Խորհրդի անդամ կարող է լինել ՄՈՒՀ-ի յուրաքանչյուր ուսանող, ինչպես նաև շրջանավարտ:

3.4.Ուսանողական խորհուրդը զումարում է տարեկան առնվազն երկու նիստ, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նաև արտահերթ:

3.5.Խորհրդի նիստերը բաց են ՄՈՒՀ-ի բոլոր մանկավարժների և ուսանողների համար, որոնք կարող են մասնակցել խորհրդակցության ձայնի իրավունքով:

3.6.Խորհրդի մասնակիցների կազմից երկու տարի ժամկետով փակ, գաղտնի քվեարկությամբ ընտրվում է նախագահ և բաց քվեարկությամբ՝ քարտուղար:

ՄՈՒՀ-ի ուսանողական խորհրդի գործունեությունը դադարում է ՀՀ օրենքներին համապատասխան, ինչպես նաև խորհրդի անդամների թվի 2/3-ի որոշմամբ:

Լուծարման կապակցությամբ ստեղծվում է լուծարքային հանձնաժողով, որը կազմակերպում է հանձնման-ընդունման աշխատանքները: